

ձեռքով սպանուած դատան վանահայր Աստուածատուր վարդապետին:

Հանգուցեալ Աստուածատուր վարդապետը ծնուած է 1850-ին: Իւր ուսումն ստացել է Տփխիսի Ներսիսեան հոգեկոր դպրանոցում: 1866-ի մայիսի 14-ին ընդունուել է իրեւ հոգեորական և կարգուել է սպասաւոր Սղնախի եկեղեցում: 1866 թ. օգոստոսի 25-ին փոխադրուել է նոյն պաշտօնով Տփխիսի Ա. Աստուածածին եկեղեցին. 1869 թ. մարտի 16-ին ձեռնադրուել է դպիր Տփխիսի Ա. Նշան եկեղեցում: 1869 թ. սեպտ. 24-ին անդամ է նշանակուել Հաղբատի վանական կառավարութեան: 1872 մայիս 30-ին ձեռնադրուել է սարկ: 1872 մայիս 31-ին կարգուել է ուսուցիչ վանական դպրոցում: 1875 յունուար 26-ին աբեղայ է ձեռնադրուել Հանգուցեալ Երեմիա Եպ. Դալստեանից և նոյն թուի մարտ 8-ին միաբան կարգուել Զարեքայ վանքին: 1875 ապրիլ 18-ին կարգուել է վանահայր նոյն վանքին, ուր և մնաց մինչև մահը, սակաւ ընդմիջումներով, և Երկար աշխատութեամբ կարողացաւ հաստատել տալ վանքի կալուածները: 1877 հոկտ. 25-ին նաստացել է լանջախաչ հանգուցեալ Գէորգ Դ. կաթողիկոսից:

Զարագործութեան հանգամանքները չեն պարզուած: —Աստուած քաղցր անէ դժբաղդ զոհի դատաստանը և հանգուցանէ ի լոյս երեսաց իւրոց. ամէն:

ՏԱ.ՃԿԱ.ՀԱ.ՅՓ

Երամեան յօբելեան: —1903 թուականի օգոստոսին Վանում տօնուելու է Երամեան վարժարանի 25 ամեայ յորելեանը: Վարժարանի հիմնագիրն՝ Համբարձում Երամեան, որ ամբողջ 25 տարի անսկուն ջանքերով առաջ է տարել իր գործը՝ ընկճուելով ոչ մի արգելառիթ հանգամանքի առաջ: որ իր ընտրած ասպարէզում աշերի լոյսը կորցնելուց յետոյ էլ չի քաշուել գործից, արդարեւ արժանի է ամէն քաջալերութեան: Մի ցաւալի

երոզութիւն է, որ այսօր Տաճկահայ գաւառոներում կրթութեան գործը՝ բացառութեամբ մէկ երկու տեղի, մնացել է բոլորովին երեսի վրայ՝ այն տխուը հանդամանքի բերմամբ, որ այնտեղ ուսաման և գիտութեան սպասաւորների ամբողջ ուշն ու միտքը կենտրոնացած է եղել Պոլսի վրայ։ Երամեան վարժարանի հիմնադիրն այլ կերպ էր մտածում։ Հաւատարիմ մնալով այն համսդման, որ գաւառում սիրով ծառայելու համար՝ ապագայ ռւսուցիչն իր նախնական զարգացումը գաւառում պէտք է ձեռք բերէ, — իր անձնական ջանքերով խնամել, առաջ է տարել մի դործ, որի պտուղներն այսօր վայելում է Վանն իր շըջակայրով։ Այժմ Երամեան վարժարանի ուսուցչական խմբի անդամները մեծ մասամբ Երամեան սաներ են, որով դպրոցի ուսումնական վիճակն աւելի գթուտ, հոգածու ձեռքերի է յանձնուած, նիւթական մասն էլ զեղծումներից ըստ կարելոյն ազատուած։ Որքան յայտնի է մեղ՝ մամուլի մէջ զեռ ո՛չ մի տըտունջ չի լսուած այդ հաստատութեան հասցէին, այնպէս որ իրաւունք չենք համարում կառկածելու հետեւեալ տողերի վրայ, որ գտնում ենք «Սուրհանդակ»ի 1149 թուում, յիշեալ յորելեանի կարգադիր մասնախմբի կողմից գրուած։ «Արդ, Երամեան, մեր արդիւնաւոր դաստիարակիր, իր աշազուրի վիճակին մէջ յաջողած է կրթական հաստատութիւն մը հիմնել Վանայ մէջ և վարել ամբողջ 25 տարի՝ շատ նպատակայարմար, պատուաբեր և արդիւնաւոր ուղղութեամբ, օժտելով իր դպրոցը մշակուած ծրագրով մը, բաւական ճոխ գրադարանով մը, ուսումանց բազմազան ձեռնարկներով և գործնական միջոցներով, ըստ կարելոյն նորագոյն մանկավարժական մեթոդներու կիրարկութեամբ, տարեկան իր 250 լիրայի թոշակաց հասոյթով, և այս ամենէն զատ, ի սեր իր ձեռնարկին, կուրծք տալով ամէն գժուարութեանց և զոհողութեանց այնքան հանրօգուտ գեր մը կատարելով իր միջավայրին մէջ, և վերջապէս հաստատամութեան և աննկուն կորովի գովելի օրինակ տալով»։ — Անշուշտ Հայ հասարակութիւնն անփոյթ չի գտնուի, իր օժանդակութեամբ քաջալերելու բազմերախտ Երամեանին. իսկ ինչ վերաբերում է կարգադիր մասնախմբին, ցանկալի էր որ նա այժմեանից պատրաստէր հրատարակելու համար մի տեղեկագիր, որտեղ արձանագրուած լինէն վարժարանի տարեկան ելն ու մուտքը, տարիների ընթացքում ուսումանց ծրագրի մէջ մտած փոփոխութիւնները, իւրաքանչիւր տարուայ ընթացաւարտների թիւը, նրանց ընարած ասպարէզներն ու, վերջապէս, ներկայ վիճակը մանրամասնօրէն։ Հաւադոյն միջոցն է այս, որով կարելի է արժանանալ հասարակութեան բանիմաց դաստկարգի վատահութեանն ու խրախուսանքին։

Աշխարհաբար շարական։ —Կ. Պոլսում հայ և օտար լեզուների ուսուցիչ պ. Երուանդ Տէր Անդրէասեան ձեռնարկել է շարականների աշխարհաբար թարգմանութեան։ Արգէն տպագրուած։ Հրապարակի վրայ են Ս. Շննդեան շարականներն իրանց գրաբար ընագրով և աշխարհաբար թարգմանութեամբ։ Հետքհետէ լոյս կը տեսնեն մնացած շարականներն եւն։

«Նօյար կամ մասունք»։ — Այս վերնագրով մի շաբթ յօդուածներ լրից տեսան «Ի՞ւրակին» շաբաթաթերթում, որոնց հեղինակն է Արմաշական Կորիւն վարդապետ։ Ինչպէս ժողովրդից շատերի, նոյնպէս և Արմաշու Դպրելվանքի խնամակալութեան անդամների կրօնական զգացումները վիրաւորուած են նորա արտայայտած աղատամիտ կարծիքներից։ Այս առթիւ խորա բողոքներ լոյս տեսան Կ. Պոլսի մի քանի թերթերի մէջ։ Ս. Պատրիարքը զրկել էր յօդուածագրին, որ նոյն հոգւով քարոզներ ևս տուել է՝ թաղային քարոզչութեան պաշտօնից և պատուիրել զնալ կամ իր հայրենի գիւղը Առլանքէդ և կամ կրկին Արմաշու վանքը։ Բայց Կորիւն վարդապետը մի մեղայագիր տալով՝ արժանանում է ներման։

Աղբատախնամ ընկերութիւններ։ —Պոլսի Հայ հասարակութիւնը՝ առաւելապէս իր օֆանդակութեամբ ոչ միայն պահում է մի ընդհանուր ազգային հիւանդանոց, ուր այս բոպէիս կան հազարից աւելի պատսպարեալներ, և Գալֆայեան որբանոցը, այլ և իւրաքանչիւր թաղի համայնք խնամում է իր կարօտ թաղակիցներին։ Տարիներ առաջ կային արդէն Պոլսի զանազան թաղեարում աղքատախնամ ընկերութիւններ, բայց գրանց թիւն այնպէս ստուար չէր ինչպէս այժմ։ Այսօր համարեա ամէն թաղ ունի իր աղքատախնամը։ Այսպիսի ընկերութեանց բազմանալը եթէ մէկ կողմից ապացոյց է, որ այնտեղ աղքատութիւնն օրէօր աւելանում է, միւս կողմից միախարութիւնն է այն տեստիկտով, որ հասարակութիւնը հետաքրքրուաւմ է իր կարօտեալ եղբայրների վիճակով, նրանց վիշտն համարում է իւրը և, որ զովելին է, միջոցներ է ձեռք առնում փոխադարձ օդնութեամբ սրբելու նրանց արտասունքը։

— Երանուհի մայրապետը վերջապէս շիրցաւ ազատիլ զինք գետնահարող կաթուածէն Անցեալները փափաքած էր որ Արքանոցին մէջ զինք պտտցնեն, և այն պահուն պազ առած ըլլալով, իր մահուան անմիջական շարժառիթ եղաւ թոքատապը։ Հանգուցեալը 48 տարու էր, Սկիւտար ծնած, Էտնաֆ ծնողքի մը զաւակ, զու Սըբուհի Մեծ Մայրապետն որդեգրած էր մատաղ հասակէն և կուտար իրեն ձեռնատուն ընել։ Ունեցած

նախնական կրթութիւնն ստացաւ Արբանոցին մէջ, և 1889ին, երբ Սըբուհի Մայրապետ մեռաւ, Արբանոցին տեսչութիւնը վիճակեցաւ Երանուհի մայրապետին, որուն օժանդակեցին Բիւրիկ մայրապետ Հանեան իբրև փոխանորդ, և Քոյր Երանուհի, վարպետ ձեռագործի, և այս վերջնոյն ալ օգնեց իր այրե քոյրը Շահիկ: Հանգուցեալն 500 սդերլինի ապահովագրութիւն մ' ըրած էր իր անուան վրայ, զոր Ս. Պատրիարքն ի վերջոյ դարձնել տուաւ Արբանոցին անուան վրայ, ինքն վճարելավ տարեգինը:

— Կարնեցիք և իրենց առաջնորդը, Տ. Զաւէն Ռ., խնդակցութեան արժանի են՝ Կարնոյ—մայր Եկեղեցին Նորոգումներուն աւարտման և Ժամերգութեանց վերսկսման աւթիւ: Նոյեմբ.ի Յըդ օրն ուրախութեան օր մ' էր Կարնոյ ազգայնոց համար զի նոյն օրը: Մեծ Երկրաշարժէն ի վեր առաջին անդամն ըլլալով, վերաբացուեցան այն մեծ սրբավայրին գուռները, և ժողովուրդը նորէն վայելեց հոգեոր պաշտամունքի շնորհն ու մխիթարութիւնը, և գոհունակութիւնն ունեցաւ լսելու պարագային յարմար մէկ քարոզն իր բարեջան Առաջնորդին: Ամենքո ալ գեռ կյշենք հոգեկան բուռն ցնցումն ի լուր ազետաքեր Երկրաշարժին Կարնոյ, որ սպառնացաւ պահ մը ամայացնել և անշքացնել բովանդակ քաղաքը, մին ամէնէն հին շահաստաններէն Ասիոյ, Պոլսեցիք վայրկենապէս օգնութեան հասան, իրենք հեռագրելով և հայթայթելով նպաստի առաջին գումարներէն մէկը, և առաջին օրէն ի վեր անձկութեամբ հարցուցին, լսեցին, կարդացին Կարնոյ լուրերը: Լայնասիւռ դժբախտութեան մէջ մխիթարական կէտ մը եթէ կար, մարդու կորուստի գրեթէ անդոյութիւնն էր, և գալով նիւթական վնասին, շնորհիւ Վեհապետական գթութեան, և տեղական ու արտաքին օժանդակութեան, շնորհիւ նաև տեղացիներուն ընդոծին ճարպիկութեան, չարքաշութեան, ինքնօգնութեան ու ձեռներիցութեան, աստիճանաբար դարմանուեցպն կորուստները: Վերաշինուեցան տուներն ու խանութները, և առեւտրական պահ մ' ընդհատուած կեանքը վերսկսաւ իր փրկարար շրջանը: Ազգին կալուածներն ու հանրային շէնքերն ոչ նուազ քայլայուած էին, և հետզինետէ անոնք ալ այնքան նորոգուեցան որ ոմանք առաջուընէ աւելի վարձք քերելու սկսան: Արկածեալներն ամփոփելու և մխիթարելու, կարօտներուն օգնութեան համելու, ծագած համաճարակին գոհերը դարմանելու և ընդհանուր խորտակումի բեկորներուն տակէն դործունեայ կեանքը վերականգնելու շինիչ աշխատութեան մէջ իր գործակցութեան դնահատելի բաժինն ունեցաւ Տ. Զաւէն Ռ., որ թէպէտ շատ համեստ է և սովոր չէ իր արարքները շոնդալից

Տեղեկադիքներով հռչակելու ի ձայն փողոյ և թմբուկի, և գեղարտօնաբարան չղրկած՝ լրագիքներու մէջ հրատարակութեան տալու, բայց այդ պատճառաւ նուազ յիշատակելի և գովելի չեն իր տքնութիւնք, իր յոզնութիւնք, որոց արդար յաջողութեամբ մը պոսակումը տեսնելով, ինքն ալ հոգեվին ոչ նուազ ուրախացած պէտք է ըլլայ այն օրն ուր հանդիսաւոր պատարագով մը գոհութիւն կմատուցանէր Առաջնորդոյ:

— Սեբաստիոյ և շրջականներուն համար ուսումնական և կրթական տեսակէտով մեծ կարեռութիւն և նշանակութիւն պիտի ունենայ, երբ վերջնականապէս որոշուի այնաեղ փոխադրել Սանասարեան վարժարանը: Արդէն այս մասին հասած տեղեկագրին մէջ այնպիսի դիւրութիւններ կան նշանակուած, որ այս տեղափոխութեան ընծայելիք օգուտները որոշապէս պատերացած են: Մէկ կողմէ այս կարգազրութիւնը, և միւս կողմէ ալ նոր բացուելիք ընծայարանին հաստատութիւնը նշանակալից իրողութիւններ են այդ կողմերուն համար, ուր շատոնց ի վեր կրթական զգալի քայլ մը չէր առնուած, և տեղական միջոցներով ինչ որ կարելի էր, այն եղած էր: Ընծայարանը բոլորովին նորութիւն մը չէ այդ կողմերուն համար: 1872ին Սեբաստիոյ Ս. Նշան վանքին մէջ դարձեալ ընծայարան մը հաստատուած է որ երեք տարե միայն տեւած է: Բայց թէ ի՞նչ արդիւնք յառաջ եկած է, գաղափար մը կազմել կարելի չեղաւ, որովհետեւ այդ ընծայարանին հասած զարգացեալ եկեղեցականներ չեն յիշուիր Սեբաստիոյ կողմերը: 72 թուականին Սեբաստիոյ մէջ եղած այս փորձը մէկ օրինակութիւնն էր ուրիշ գաւառի մը, Կեսարիոյ, որ հաղիւ չորս օրուան հեռաւորութիւն ունի: Հոն նոյն տարին Խղիա եպսկոպոսի կը հաստատուի Ս. Կարապետի Ժառանգաւորաց վարժարանը, որ աւելի զարդացաւ և կանոնաւորուեցաւ հիմա, ինչպէս յայտնի է: Ժամանակագրութիւնը կը ցուցնէ որ ճշգրիտ կէս դար առաջ, այսինքն 1852ին Եւդոկիոյ Յովակիմ Աննայի վանքը ունեցած է Ժառանգաւորաց վարժարան մը որ 20 տարիի չափ տեւած է և 1871ին բարգաւաճ վիճակ ստացած: 1853ին Մուշի Ս. Կարապետ վանքին մէջ կը հիմնուի Ժառանգաւորաց վարժարան մը և 1856ին Վանայ Վարագայ վանքին մէջ կը հաստատուի Ժառանգաւորաց վարժարան մը, ուր երկրագործական դասեր ալ տրուած են 1860ին: 1858ին ալ Կարնոյ Ս. Լուսաւորիչ վանքին մէջ Արծնեան անուն Ժառանգաւորաց վարժարան մը կը բացուի, Ժամանակին առաջնորդ Գրիգորիս Եպիսկոպոս Զօրաբարելեանի ջանքով: 1859ին կը բացուի Գաղատիոյ Ս. Աստուածածին վանքին Ժառանգաւո-

բաց վարժարանը՝ որ կազմ կեանք մը կունենայ. և արդէն այս յեշուածներէն երկար կեանք ունեցողներն ալ երկարատև արդիւնք չեն ունեցած, բացի Կեսարիոյ ժառանգաւորացէն, որ մինչև հիմա շարունակած է իր գոյութիւնը: Պէտք է աւելցնել ուսկայն որ Եկեղեցական վարժարաններուն մէջ առաջնութիւնը կը վերաբերի գարձեալ Արմաշի գպրեվանքին, որ 1821 թուականէն ի վեր ունի իր գոյութիւնը:

— ԽԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ իր 20 նոյ. — 3 դեկտ. նիստին մէջ շատ ուշագրաւ տնօրինութիւն մը ըրեր է: Գաւառական առաջնորդներէ ոմանց համար եպիսկոպոսական վկայական խնդրուած ըլլալով, առ այժմ յետաձգուեր է անոնց նկատառումը և միւս կողմէ որոշուեր է նաև որ ասկէ վերջ, երբ գաւառական առաջնորդ վարդապետ մը եպիսկոպոսական աստիճանի բարձրանայ, խոստմնագիր մը պահանջուի իրմէ, որ անպատճառ Վիճակին մէջ մնայ և, եթէ օր մը հարկադրուի թողուլ իր պաշտօնը, Վիճակին չհեռանայ:

— Երանուհի մայրապետի մահովը Գալֆական որբանոցին մայրապետութեան պաշտօնը թափուը կը մնար, և պէտք էր որ յաջորդին ընտրութիւնը շուտով տեղի ունենար: Որբանոցի հիմնադրին՝ բարեյիշատակ Սըրուհի մայրապետին, կտակագրին 12ըդ յօդուածին տրամադրութեան համաձայն, Ս. Պատրիարքին վերապահուած ըլլալով այս անուանումը, և յարմարագոյն ընտրելիները ներկայացնելու համար Քոյրերու միաբանութիւն մը չգտնուելով որբանոցին մէջ, ուղղակի և ամբողջակի ընտրութիւն մնացած էր Ս. Պատրիարքին վրայ: Հետեաբար ն. Սըրբաղնութիւնը, կտակագրին իրեն աւանդած իրաւունքով և իր պատրիարքական հեղինակութիւնովը կատարեց այդ ընտրութիւնը և մայրապետ ընտրեց որբանոցին քոյր Քրիստինէ Փափաղեանը՝ որ Երանուհի մայրապետին հիւանդութեան միջոցին իրեւ տեղակալ վարեց այդ հաստատութիւնը և իր ձիրերով ու արժանեօք ամենուն ծանօթ, նաև այս առթիւ ցոյց տուած ըլլալով փորձն իր բարեմասնութեանց և անձնուէր ծառայութեան, արժանի համարուեցաւ Ս. Պատրիարքին կողմէ այս պաշտօնին: Իր պաշտօնին հաստատութեան կոնդակը պատրաստուած է, որուն մէջ բացատրուած են իր պաշտօնը՝ իրեւ մայր որբանոցին և վերատեսուչ հաստատութեան, և իր պարտականութիւնները՝ հանգէպ Պատրիարքարանի, և որուն մէջ քաջալերանք և յորդորներ եղած են նաև որբուհիներուն: Այդ կոնդակը յառաջիկայ երկուշաբթի օր որբանոցին խոստովանահայր և կրօնուսոյց ձէպէճեան Գըլդոր քնյակ ձեռօք պիտի զըկուի որբանոցը և ի լուր

ամենեցուն պիտի կարդացուի Պատրիարքաթանի կողմէ Խառա
քօյի բարողիչ Տիրայի Ա. և միջոցաւ լուս դշիուելով Քրիստինէ
մայրապետին՝ ծանուցուեցաւ իր ընտրութիւնը: Այս ընտրու-
թիւնը հաղորդուեցաւ նաև որբանոցին Տիկնանց խնամակալու-
թեան և Խառապէօյի Թաղ. Խորհուրդին:

— ԳԱՐԱԿԻ ՕՉԵԱՆ Խնամակալութիւնը վերջնապէս որոշեր
է դնել Խառապէալ Օթէլը, որ Բերայի Մեծ մողոցին վրայ
գտնուած կարեւոր շէնքերէն մէկն է: Այս խորհուրդը շատոնց
կար արդէն, սակայն Խնամակալութիւնը բաւական վարանման
մէջ էր, որովհետեւ, լնչափս յայտնի է: Գարակի օգեան ընտանի-
քին տուած դումարէն 5000 ոսկի որբանոցի շինութեան յատ-
կացուելէ յետոյ: մնացեալը ամբողջովին պիտի յատկացուի այս
շէնքին գնման և ապագային եթէ արժէքը կորսնցնէ և կամ ու-
րեց կերպով կորուստ մը յառաջ գայ, ոչ ոք կաւդէ պատասխա-
նառու մնալ: Յանձնաժողովոյ անդամները վերջին խօսքը թո-
ղած են Գարերիէլ էֆ. Նորատունկեանի, որ այս կարգի պարա-
գաներու մէջ ամենէն զգուշաւորն է և կը փափաքի ամէն բան
լաւ խորհիլ և այնպէս դործադրել, խծրածանք մը, քննադատու-
թիւն մը պակաս ըլլալու համար: Ուստի ամէն տեսակ քննու-
թիւններ կատարուած և ճարտարապետական տեղեկագիրներու
վրայ որոշուած է դնել այդ շէնքը 16000 ոսկիի: Այս հիման
վրայ, այս օրերս պիտի կատարուին վերջնական ձեակերպու-
թիւնները: Շէնքը հինգ յարկ ունի որուն երեք վերին յարկերն
են որ աւելի շահաբեր կրնան ըլլալ: Յանձնաժողովը կը խորհի
մաս մը ուրիշ գումար ալ յատկացնելով ձեափոխել, այսինքն
աւելի ընդարձակել շէնքը նոր յաւելումով մը շէնքին ետեր
գտնուած բաւական տարածութեամբ գետնին վրայ: Յանձնա-
ժողովը, երկար մտածումէ յետոյ, նոյն գումարին շահագործու-
թեան համար աւելի յարմար միջոց մը կամ գնուելիք պատ-
շաճ կալուած մը շգտաւ: Կը կարծուի որ այդ կերպով մինչև
100ին 9 տոկոս առնել կարելի չպիտի ըլլայ: Թէպէտ Յանձնա-
ժողովոյ անդամներէ ոմանք կը կարծեն թէ Բերայի հետզհետէ
դէպ յառաջ ընդարձակուելովը վարի կողմերը կը կորսնցնեն ի-
րենց յարգը, սակայն այս կարծիքը ըոլորովին ճիշդ ալ չէ, և
ինչ որ ալ ըլլայ, Խառապէալ Օթէլի արդի տեղը ու դիրքը կը պա-
հէ միշտ իր կեդրոնի առաւելութիւնը և կարեսրութիւնը:

— ՍՍՈՅ Կաթող. ընտրութեան մասնակցող բոլոր թեմա-
կան և վանական պատգամաւորները իրենց տեղերը վերադարձեր
են: Միայն կը մնան Անտիոքի Առաջնորդ Թաղէոս Ա. և Այն-
թապէ Առաջն. Փոխանորդ Կարապետ քն., որոնք մտագիր են

Պատրիարքարանի պատուիրակին հետ Երուսաղէմ Երթալ, հըաւիրելու Կիլիկիոյ Կաթողիկոս Ամեն։ Տ. Սահակ Սրբազնը։

— ԱԼԱՇԿԵՐՑԻ նախորդ Առաջն. տեղապահ Մարգարեան Մամբրէ Ա., որ Ա.ան կը դանուի հիմա, նամակ մը գըելով Ս. Պատրիարքին, յայտներ է իր անպաշտօն վիճակը։ Ն. Սրբազնութիւնը Նկատելով որ յիշեալ վարդապետը Աղթամարի միաբան է և Աղթամարի, ինչու նաև Վանի, ընդարձակ Վիճակը պէտք ունի հոգեոր հովիւներու, յանձնարարեց Վանոց առաջն. տեղապահ Տ. Սահակ եալիսկոպոս Բագրեանդեանի որ յարմար պաշտօն մը գտնէ յիշեալ վարդապետին։



ՊԱՐՍԿԱՅԱՅԻ

ՀԱՄԱԴԻԾ ԱԿՆԱՐԿ

Աւրպատականի թեմի կացութեան եւ կարիքների վերայ։

Մեծ Մասիսի կրծքից մինչև Կասպից ծովը և Արարատից մինչև Ուրմիոյ լճի հարաւային Միանդար և Սոուղբուլաղ գաւառներն ընկնող տարածութիւնը կազմում է մի ընդարձակ փոխարքայութիւն, որի վարիչն է ըստ սուվորութեան Պարսից Շահի գահաժառանդը, և նոյն այդահարին տարածութիւնն է բռնում։ Ատրպատականի թեմը Այդ երկրի 14 ընդարձակ գաւառներում և Մակուի խանութեան մէջ ապրում է մօտաւորապէս 48,000 հայ ժողովուրդ, որ պարապում է երկրագործութեամբ, վաճառականութեամբ և արհեստներով։ Եթէ միացնելու լինենք Երեանի, Գանձակի և Բաքուի նահանգները՝ նոր միայն կստանանք Ատրպատականի թեմի չափ մի տարածութիւն, ուր ցրուած են հայութեան այնքան սակաւաթիւ մնացորդները։ Ատրպատականի թեմում բացի առաջ-